Հովհաննես Թումանյան

Հին կռիվը

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

ՏԱՆԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Մենք կարծում էինք, թե իր շանթերով
Հըսկում է աստված Սասմա սարերին.
Մենք ասում էինք՝ անթիվ նավերով
Կըգան օգնության մեր ծանըր օրին…

Ավա՜ղ մեր պայծառ հույսերի համար.
Ահա խորտակված, և ահա կըրկին
Նայում ենք անհույս, մենա՛կ, դալկահար՝
Մորթող թըշնամու արյունոտ ձեռքին:

Երկրի մեծերը չեն փոխում իրենց

Մեռելի ոսկրին ողջ ազգը հայի,
Մեր տունն են ուզում, մեր տեղն են ուզում,

Մեր բուն երկիրը՝ մեզնից ամայի…

Նա էլ, որ աստծու անունով եկավ,
Քրիստոնեական խաչով, խոսքով գրքության,
Նա էլ աստրծուն՝ կանգնեց՝ փառք տրվավ,
Որ մենք հոշոտված, տանջված ենք էսքան…

Ու հոսո՛ւմ, հոսո՛ւմ, հոսում է անմեղ
Արյունն-արցունքը տարաբախտ ազգի,
Հոսում ամեն օր, հոսում ամեն տեղ,

Եվ դեռ սոսկալին չի եկել իսկի…

Եվ ահա մենակ, խոցված ու ցավոտ,
Թե մարմնով տանջված՝ հոգով առավել,
Մենք միտք ենք անում մինչև առավոտ .
Տե՛ր ամենագետ, մենք ի՞նչ ենք արել…

I

Հայի չար բախտը ինձ ներքև բերավ
Բարձրը Գուգարքի ծաղկոտ սարերից,
Իմ հոգին լրցրեց հառաչանք ու ցավ,
Տրխուր երգերի քրնար տրվավ ինձ:
Դե՛, հեծծի՛ր, իմ երգ, ինչպես կրհեծծի

Բուքն իմ ամայի աշխարհքի վրրա,
Անքուն կարոտի դուռը կրծեծի,
Թե՝ քու անբախտը չրկա ու չրկա…
Դե՛, հեծծի՛ր, իմ երգ, ինչպես սրգավոր
Հայի հեծեծանքն ու բողոքն անվերջ,

Ինչպես պանդուխտի թառանչ սրրտախոց
Օտար դրոներում, անհայտ ճամփի մեջ…

II

Իմ միտքն էլ, ավա՛ղ, շրրջում է մոլոր
Հայի հալածված պանդուխտի նրման,
Մենակ ամեն տեղ, տրխուր ամեն օր,

Ցավերով լրցված պանդուխտի նրման:
Կորցրել է վաղուց ամենն, ինչ ուներ,
Փրնտրածն էլ, էսպես, չի գրտնում բրնավ,
Անքուն ջրրի պես գրնում է երեր,
Աշխարհքից աշխարհք, մի ցավից մի ցավ:
Ու, ինչպես օտար աշխարհքից դարձող
Կարոտած ճամփորդ, նրկատում է նա՝
Հեռո՛ւ, մրթան մեջ, վառ կարմիր լուսով
Ծաղկում է ծանոթ լուսամուտն ահա…
Մենակ ու խաղաղ ճրրագի առջև,

Չոր ձեռքը տրված դալուկ ճակատին,
Մրտքի ծովն ընկած մրտածում է նա,

Հին տառապանքի, հին ցավի որդին:
Գրլխի վերևը տրխուր պատկերներ,
Գրրքե՞ր ու գրրքեր իր շուրջը բոլոր…
Ու ներս է մտնում մի բարի ըստվեր,
Իր մայրը ցամքած, մայրը սևաշոր:
Ի՞նչ ես միտք անում, Վահա՛ն ջան, էդքան,
Ասա՛, քեզ դուրբան, քո մրտքին դուրբան,
Ի՞նչ ես միտք անում ու հալվո՛ւմ, հալվո՛ւմ…

Բան չըկա, մայրի՛կ, գըլուխս է ցավում…
Չէ՛, սուտ ես ասում, ինձ չես խաբիլ էլ.
Էդ ո՞վ է, ասա՛, քո քունը կըտրել,
Էդ ո՞ր սիրունը, ո՞ր անուշ հոգին…
Հա՛, գըտա՛ր, մայրի՛կ… սիրում եմ մեկին…
Տեսա՞ր, որ ասի՝ չես խաբիլ ինձ էլ,
Տեսա՞ր, ինչպես եմ ցավըդ իմացել…
Ինչո՞ւ ես հապա ծածկում ինձանից,
Ծածկում ինձանից քեզ սիրող նանից…
Դե ո՞վ է, ասա՛, ես էլ կըսիրեմ…

Դե ո՞ւր է, ասա … ո՞ւր է, որ բերեմ.
Բերեմ, որ էդքան միտք չանես էլ դու…
Չես կարող, մայրի՛կ, նա շատ է հեռու…
Նա շատ է հեռու, գերության միջում,
Դու չես իմանում, դու չես ճանաչում…
Էնպես մի դըժար տեղ եմ սիրել ե՛ս…
Չես կարող հասնես, չես կարող բերես…»
Ու դուրս է գընում հուսահատ, մոլոր
Իր մայրը ցամքած, մայրը սևաշոր,
Աղոթում իրեն Վահանի համար,

Աշխարհքի համար, ամենքի համար…

III

Հայտնըվեց ապա մի օտար տըղա,
Մի ուրիշ տրդա երևաց էլի,
Խոսում են անքուն գիշերներն երկար,
Խոսում են տաք-տաք, մո՛ւթ, կասկածելի…
Ո՞վ են, Վահա՛ն ջան, գալիս են քեզ մոտ,

Էդ ինչ տղերք են՝ գունա՜տ, անծանոթ…
Երնեկ իմանամ՝ էդ ինչ եք ուզում,
Էդ ի՞նչ եք էդքան խոսո՜ւմ ու խոսում…
Պանդուխտ են, մայրի՛կ, ընկեր տղերք են,

Քըշված, հալածված, ընկած դես ու դեն.
Տուն ու տեղ չունեն, ինձ մոտ են գալիս,
Զըրույց ենք անում, իրար սիրտ տալիս…
Իմ անբախտ զավակ, մանկուց վըշտակոխ.
Ընկերներդ էդպես հալածված, անհող,
Սիրածըդ հեռու, գերության միջում…
Խոսում է մայրը, խոսում, հառաչում,
Ու դուրս է գընում կըրկին շըվարած…
Ամեն տեղ քընած, ամենքը լըռած…
Մենակ՝ մընում է իր անհոգ մարդուն,

Չի գալիս նա էլ, դեռ չի գալիս տուն.
Իր պեսների հետ էլի՛ էն անտեր
Գինետանն ընկած ու խոսում է դեռ…

IV

(Գինետանը)

Կըտրել է վաղուց ամեն ձեն ու ձուն:
Գիշերվան կես է: Հոգնած ու անքուն,
Գըլուխը գինոտ դազգահին դըրած՝
Գինետան տերն էլ քուն մըտավ թըմրած:
Կեղտոտ լամպարի աղոտ լուսի տակ,

Մեջտեղը մի գավ, աղքատ ու անկարգ
Սեղանի շուրջը, իրենց անկյունում,

Երեք ծերունի զրրույց են անում:
Ցավ-կրրակ դառավ էս լակոտն, ախպե՛ր,
Էլ բան չի ասվում, հետը չի խոսվում,
Ուշքրն ու միտքը միշտ հեռու տեղեր՝
Չես էլ հասկանում, թե ինչ է ուզում…
Հավան չի կենում աշխարհքի կարգին.
Ասում է՝ մարդիկ բրոնության տակին…

Միտս էլ չի գալիս՝ ինչպես է ասում,
Խրրթին, գրրաբառ բաներ է խոսում,
Էս մեկն՝ էսպես է, էն մեկելն՝ էնպես…

Երկուսից մինը կամ նրրանք, կամ ես…
Սո՛ւս կաց, ասում եմ, էդ ի՞նչ ես անում…
Թե՝ դու հին մարդ ես, դու չես հասկանում…
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Ա՛յ քեզ նոր տրղա՛…
Դե բաժակրդ բե՛ր,
Մարտիրոս ախպեր,
Բեր մի-մի բերան
Կյանք խրնդրենք դրրան:
Էդ, ինչ որ դու ես խաբարը տալիս,

Մի ուրիշ տեսակ բան է դուրս գալիս…
Բարի հիշատակ լինի քեզ համար,
Տունրդ շեն պահի ու ծուխրդ վարար:
Աճում են կոնծում ընկեր ծերերը,
Բայց նոր է բացվել պատմության ծերը:

Հա՛, ախպե՛ր, ուրիշ բան է դուրս գալիս.
Ես էլ հենց էդ եմ գրլխիս վայ տալիս,

Թե սրրա վերջը ուր պիտի գընա.
Տանից ու բանից եղած ավարա,
Աշխարհքի դարդը շալակն է առել՝

Ամենքի համար դարդաքաշ դառել…
Ընկեր թե օտար, ծանոթ, անծանոթ–
Ով վեր է կենում վազում է իր մոտ.
— Վահա՛ն, ի՞նչ անենք… Վահա՛ն, ո՞նց կենանք…
Վահա՛ն, ի՞նչ կասես… Վահա՛ն, ե՞րբ գընանք…
Գլլխի՞ եք ընկնում՝ «Էնտե՛ղ» են գընում…
«Էնտեղ» հո գիտե՛ք, լավ եք իմանում…
«Էնտե՛ղ», օ՛ֆ, «էնտե՛ղ»
Կրրակ է անթեղ…
Դե բաժակրդ բե՛ր,

Մարտիրոս ախպեր,
Արի՛, մի սրրտանց

Կյանք խրնդրենք դրրանց…
Զահել ժամանակ ի՛նչքան եմ ես էլ
Էդ ճամփի վրրա անքուն երազել,
Ի՛նչքան եմ ուզել թե փախչեմ ծածուկ…
Հիմի դրրանցն եք թարիֆ անում դուք…
Ուր գընան՝ աստված բանները աջի,
Չարը խափանի, բարին առաջի…
Ածում են կոնծում ընկեր ծերերը,

Բայց հեռու է դեռ պատմության ծերը:

Շրնորհակալ եմ, ողջ կենաք, ախպե՛ր,
Էս տեսակ մի բան չեմ տեսել ես դեռ.
Տեղ ունես թե չէ՝ մրտիկ չեն տալիս,
Տասը գրնում են՝ քրսանը գալիս,
Ինչ որ ճանկում են՝ ուտում են, թափում,

Ամբողջ գիշերը վիճում, աղմկում,
Ամպի պես ծրխով սենյակը լցնում…
Էլ ոչ մահճակալ, ոչ տեղ են հարցնում.
Մինը բարձրանում՝ սեղանին պառկում,

Մյուսը հատակին լեն-արձակ ձրգվում…
Ոչ աղբ են նայում, ոչ փոշի, ոչ ցեխ,
Պառկում են էստեղ, պառկում են էնտեղ…
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Թամաշա է հա՛…
Դե բաժակը բե՛ր,
Մարտիրոս ախպեր,
Արի՛, մի սըրտանց
Կյանք խընդրենք դըրանց.
Շատ լավ տըղերք են, ես ու իմ հոգին.

Հավան եմ կենում դըրանց արարքին,
Մարդը նա հո չի՝ հենց իրեն նայի,
Մարդը նա է, որ աշխարհքը շահի…
Տեր աստված պահի իրեն խընամում…
Ածում են՝ վերջին բաժակն էլ քամում,
Չեն հասնում սակայն պատմության ծերը,
Ու միշտ ընկնում է էգուց գիշերը:

V

Դատարկ փողոցով, բարձրը հազալով,
Ինքը իրեն հետ մենակ խոսելով,
Թըրը՛խկ հա չըրը՛խկ, գիշերվա մըթնում

Մարտիրոս ախպերն իր տունն է գընում:
Եվ ուշ գիշերով հասնում է նա տուն:
Ճըրագը վառ է, «նըրանք» էլ զարթուն,

Աղմկում են դեռ կողքի սենյակում,
Էն նոր դուրս եկած երգերն են երգում:
Պառավն էլ անքուն իրեն է մընում,
Ձեռները ծոցին դուրս ու տուն անում,
Ու մարդը շեմքից մըտած-չըմտած՝
Դիմացն է գալիս հանգած ու հատած:
Բա՛ գիտե՞ս, ա՛յ մարդ, ի՞նչ իմացա ես,

Գիտե՞ս ինչիցն է մաշվում երեխես,
Սիրո՛ւմ է մեկին…
Վա՛յ քու կարճ խելքին…
Ի՞նչ սիրահարված, բա՛ն գիտես իսկի.
Ազգի համար է միտք անում, ազգի՛.
Ուրիշի համար, խեղճերի համար…
Ի՞նչ սիրահարված, կարճամիտ հիմա՛ր,
Ի՞նչ ես հասկանում՝ ինչ կա աշխարհքում.
Ականջդ մի բաց, տես ինչ են երգում…

(Տղերքը երգում են)

Սև սարերի ետև նըրանք

Տառապում են խավարում,
Լույս են ուզում ու ազատ կյանք
Աստծու ազատ աշխարհում:
Կանցնենք թափով
Սարերն ամպոտ,
Կերթանք խրմբով
Մենք նըրանց մոտ:

Է՜յ, հերիք էր, լար բռնակալ,
Քանի՞ տանջես խեղճերին .
Խեղճը պիտի ապրի դարձյալ,

Վայն եկել է քու օրին…
. . . . . .
Ազատության որդիքն ենք մենք՝
Թրոած դեպի ապագան:
Էսպես խրմբով սրլանում ենք,
Ո՞վ կրփակի մեր ճամփան.
Կայծակ կրլնենք
Կիջնենք ամպից.
Հեռո՛ւ ճամփից,
Հեռո՛ւ ճամփից…

Հե՜յ, գալիս ենք, ո՛վ տանջվածներ,
Գալիս ենք մենք զինավառ,
Ե՛վ ազատ օր, և՛ կյանք, և՛ սեր
Ողջ բերում ենք ձեզ համար:
. . . . . .

VI

Դողդոջ ու գունատ պառավները լուռ
Ականջ են դրնում: Սարսափ ու սարսուռ
Պատել է նրանց, և սարսափահար,
Տեղները սառած, նայում են իրար.
Ի՜նչ է կատարվում իրենց հին տանը,

Ի՜նչ երգ է երգում իրենց Վահանը,
Ի՜նչ երգ են երգում էս տղերքը նոր,
Ի՜նչ երգ են երգում անզո՜ւսպ, ահավոր…
Ամբողջ գիշերը կըրակի վըրի
Էն շամփրի նըման, անքուն ու ցավոտ,
Պըտուտ են գալիս անկողնի միջին,
Պըտուտ են գալիս մինչև առավոտ:

Վահա՛ն ջան, Վահա՛ն, ի՞նչ երգեր են էդ.
Ի՜նչ վըտանգավոր երգեր եք երգում…

Էդ ո՞ւր ես ուզում գընաս դըրանց հետ…

Ի՞նչ է պատահել, ի՞նչ կա էն երկրում…
Է՜հ, մայրի՛կ, դու էլ՝ ի՜նչ երգեր են էդ…
Ջահել տըղերանց երգեր են, էլի…
Ջահել տղերք ենք, միտքներըս թըռչում՝
Հազար մի հեռու տեղ են ման գալի…
Ու ժողովները դարձան աղմըկոտ.
Աշնան հավքերի էն տարմի նըման,
Որ ղըժվըժում է՝ չըվելուց առաջ
Դեպի արևոտ կողմերը գարնան:
Մի օր էլ հանկարծ աղմուկը լըռեց,

Վահանը չեկավ էն գիշերը տուն:
Չըկա մյուս օրն էլ, չըկա՜ ոչ մի տեղ,
Ամեն հարցուփորձ անցավ ապարդյուն:
Եվ ահա նամակ կորած Վահանից:
Բանում են ըշտապ, դողդոջ ձեռքերով.
Ասում է՝ իզուր էլ մի՛ փնտրեք ինձ.
Էլ մի՛ փնտրեք ինձ ու մընաք բարով…
Դուք ինձ կյանք տըվիք, դուք ինձ մեծացրիք,
Բայց քանի էսքան ցավ կա աշխարհքում,

Իմ կյանքն իմը չի, իմ սիրտն իմը չի,

Չեմ կարող հանգիստ մընալ ձեր գըրկում:
Ցավի աշխարհքում արնոտ ու ահեղ
Ուրիշ նոր կյանք է բացվել ինձ համար.
Ուրիշ հայրեր են մընում ինձ էնտեղ,
Ուրիշ մայրեր են կանչում անդադար…
Ներեցե՛ք, որ ձեզ թողնում եմ էդպես
Անկա՛ր, անխընդում, ծերության օրով,
Ներեցե՛ք ձեր խենթ, խելագար որդուն,
Մոռացեք նըրան ու մընա՛ք բարով…

VII

Որդու նամակը ծընկանը դըրած,

Արցունքը ցամքած էն մաշված դեմքին,
Խաղաղ իրիկվան դեմ ու դեմն ահա

Նըստած է մայրը իր դատարկ շեմքին:
Կատուն է կողքին մըռռում միալար.
Փոքրիկ Սերիկն էլ, կուչ եկած իր մոտ,
Էնպես միամի՛տ, տխո՛ւր, դալկահար
Պոըշկել է մոր դեմքին արցունքոտ:
Նայում է մայրը, նայում է հեռուն,
Էն անհայտ հեռուն, ահավո՛ր, անվե՛րջ,
Ուր գընաց իրեն զավակը սիրուն,
290 Գընաց «նրանց» մոտ, արյան ծովի մեջ…
Ո՛վ քաղցրահայաց սուրբ Աստվածածին,
Ո՛վ արագահաս զինվոր սուրբ Սարգիս,
Դուք օգնեք խեղճին, հասնեք նեղվածին,

Դուք տաք հովություն արար աշխարհքիս.
Հարեհաս լինեք «նրանց», ամենքին,
Ամենքի հետ էլ իմ ճար ու մեկին…
Աղոթք է անում իր մեկի համար,
Աշխարհքի համար, ամենքի համար,
Մինչև թրոչում է ճաճանչը ետին,
300 Մինչև որ մութը առնում է գետին…

VIII

Մրթնեց: Կրտրել է ամեն ձեն ու ձուն:
Գիշերվան կես է, խաղաղ լրռություն:
Հին գինետանը, իրենց անկյունում,
Երեք ծերունի զրրույց են անում:
Ի՞նչ ես միտք անում, Մարտիրոս ախպեր.
Լա՛վ կրլնի վերջը… բաժակրդ մի բե՛ր…
Բե՛ր մի-մի բերան
Կյանք խրնդրենք նրրան…
Տեր աստված բարի ճամփա տա իրեն,
310 Ներրա բաց աչքը լինի միշտ վրրեն…
Վատ բանի համար հո չի գրնացել…
Ի՞նչ ես մոլորված նրստած մրնացել,
Բաժակդ էլ լիքը առաջիդ է դեռ…
Վերցրրո՛ւ, խրմի՛ր, Մարտիրո՛ս ախպեր…

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

ՃԱՄՓԻՆ

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլույս մրթնում
Երկա՛ր դարերով գընում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով

Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
Բարձըր լեռներում:

Բայց քանի անգամ շեկ անապատի
Օրդուները սև

Իրարու ետև
Եկա՛ն, զարկեցին մեր քարվանն ազնիվ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում:

Ու մեր քարվանը շըփոթ, սոսկահար,

Թալանված, ջարդված
Ու հատված-հատված
Տանում է իրեն վերքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ
Հեռու աստղերին,
Երկրնքի ծերին,
Թե երբ կրբացվի պայծառ առավոտ
Հայոց լեռներում,

Կանաչ լեռներում:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

ԵՐԿՐՈՒՄ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հեքիաթն ասում է, թե՝ մի աշխարհքում
Բղխում էր առատ ջուրն անմահական,
Բայց ագահ վիշապն առաջը փակում,
Ծարավ էր թողնում աշխարհքն աննըման:

Նա զոհ էր ուզում սերուն աղջիկներ,
Որ ջուր բաց թողնի ծարավ աշխարհքին.
Եվ, անմահության ջրրի փոխարեն,
Մարդիկ շատ դարեր արցունք խըմեցին:

Մինչև մի տրղա, Լույս երկրից եկած,

Կրովեց էն գերի աշխարհքի համար,
Հաղթեց, ազատեց աղբյուրը փակված,
Տանջվող հոգիներ փրրկեց անհամար:

Ո՛չ, հեքիաթ չի սա լիքը հրրաշքով,
Եղած թե չեղած Մրթին աշխարհքում,
Ճրշգրիտ դեպք է սա տեսած իմ աչքով,
Եվ հեքիաթ չրկա մեր անբախտ կյանքում…

Մեր երջանկության աղբյուրը փակած՝
Մեր վարդ քույրերին հոշոտում է նա…

Ա՜խ, ի՜նչքան արյուն, արցունք է թափված

Մեր սիրուն երկրի սարերի վրրա…

I

«Լո՛-լո՜, լո՛-լո՜, մերն են սարեր,
Ծաղկոտ սարեր Տարոնի,
Ծաղկոտ սարեր, ազատ օրեր,
Սերն ու գրգվանք սիրունի…
Լո՛-լո՜, լո՛-լո՜»…

Գրլո՛ւխ տրվեք, գոռոզ սարե՜ր,
Անց է կենում Մուսաբեկ,
Գրլո՛ւխ տրվեք, վախկոտ հայե՜ր,
Չընչին գյուղեր ու օբեք:

Ո՞ւր կա ոսկի, ո՞ւր սիրուն կին,
Առաջ բերեք գըլխաբաց.
Ո՞վ կա ընդդեմ նըրա կամքին,
Ո՞վ է կյանքից կըշտացած…
Մըշու երկրում թուր է զարկում՝
Դողում են Վան իր թափից,
Դողում են Վան, մինչ Արզըրում,
Ահեղ թափից, սարսափից…

II

Գըլուխ տըվե՛ք, վախկոտ հայե՛ր.
Ջըրը՛նգ, եկավ Մուսաբեկ.

Հե՛յ, դո՛ւրս արի, քեշի՛շ բաբա.
Ո՞վ կա տան մեջ, դուրս եկե՛ք…
Ու սըրահի կեսմութի մեջ
Գուճհուպ եկավ քահանան,
Դողդոջելով, ծերուկ ու խեղճ,

Բըռնած սարսափն իր մահվան:
Հավա՞ն ես ինձ, քեշի՛շ բաբա,
Հապա նայիր մի վերև…
Աստված է քեզ հավնել, աղա՛,
Աստված կյանք տա ու արև.

Դե բե՛ր, հապա՛, որ հավան ես,
Աղջիկըդ բե՛ր, տուր ինձ կին.
Դե՛հ, շո՛ւտ արա, քեշի՛շ բաբա,
Դուրս բեր սիրուն Շողիկին:

Լուռ կանգնած է ծեր քահանան,
Դեմքը դեղին, միրքի պես,
Ծիծաղո՞ւմ է լացի նման,
Թե լալիս է ժըպտերե՞ս…
Հա՛, հա՛, հա՛, հա՛… Հավա՞ն չես ինձ…»
Խընդաց խումբը՝ հա՛, հա՛, հա՛…

Ու սոսկալի էն ծիծաղից
Սարսափն ընկավ տան վըրա:

Ո՞վ չի հավան Մուսաբեկին…
Մի Մուսաբեկ մի աշխարհք…
Բախտավոր ենք՝ ես… իմ որդին…
Ո՞վ է տեսել էսպես փառք…
Միայն թե, աղա՛, գութ արա մեզ,
Ժամանակ տուր երկու օր,
Որ պատրաստվենք բեկին վայել.
Ոտիդ հողն ենք նորից նոր…

Մի երկու օ՛ր… բայց իմացի՛ր,
Ետ եմ գալու ես նորից.
Երկի՞նք թըռիր, գետի՞նն անցիր
Չես ազատվիլ իմ ձեռից…

«Լո՛-լո՛, լո՛-լո՛, մերն է Տարոն
Վայելքներով իր բոլոր…
Լո՛-լո՛, լո՛-լո՛…»: Հանգավ «լո՛ ·լո՛»-ն
Սարի ետև հեռավոր:

III

Ի՞նչ է ողողանջում զանգակը գուժկան,
Գյուղի զանգակը էս անվախտ ժամին .

Կարկո՞ւտ է գալիս մրթնած երկրնքից,
Հրրդե՞հ է ձրգել գյուղը թրշնամին…
Ի՞նչ է պատահել, ծերունի տերտեր,
Ի՞նչ ես վրրդովում էս հոգնած խալխին:
Եկե՛ք, իմ որդի՛ք, եկե՛ք, իմ որբե՛ր,
Երկինքը փրլավ իմ ճերմակ գրլխին…

Ու լաց է լինում զանգակը ժամի,
Գալիս է կանգնում ամբողջ Տալվորիկ,
Ու ձայն է տալի, գոչում ծերունի
Իրենց քահանան ձայնով զարհուրիկ:

Եկե՛ք, ընկե՛ր-հարևաննե՛ր,
Իմ Շողիկի հարսնիքին.
Ծաղի՛կ բերեք ալ ու կարմիր
Իր անթառամ պրսակին…
Դուստր եմ պահել ես նազելի,
Սրրտիս խրնդում, աչքիս լուս.
Քուրդը եկավ դուստրրս խրլի,
Կյանքը խրլի ծերունուս:
Հայր եք դուք էլ, զավակի տեր,
Մի ճար գրտեք իմ ցավին…

Ու ծերերը՝ չո՛ր, ալեհե՛ր,
Հառաչում են խրմբովին.
Ափսո՛ս Շողիկ, սիրո՛ւն Շողիկ,
Մեր աչքի լուս, մեր ալ ծաղիկ…
Վա՛յ խե՛ղճ ծրնող, ծեր քահանա .
Քրրդի ճամփեն տատասկ դառնա…

Հրնչում է դարձյալ զանգակը ժամի,
Կանչում է, գոչում հայրը ծերունի .
Հավա՛ր ձրգեք հեռու տեղեր,

Ազգ ու ազինք իմանան,

Դրրոշ բանան, զորքեր կապեն,

Թող գա՛ն, հասնեն օգնության…
Եվ զուր ծերունու աչքերը անզոր
Հրրաշք են փընտրում մրշուշոտ հեռվում,
Լուռ են ու դատարկ ճամփեքը բոլոր,
Փոշի չի ելնում հայոց դաշտերում:
Լալիս է սակայն զանգակը կրրկին
Ու գոչում է ծերն առավել ուժգին .
Լրսի՛ր, աստվա՛ծ, եթե մի օր
Բույր եմ խրնկել քո անվան,

Թե դու էլ ես ծե՛ր, ալևո՛ր,
Ու գութ ունիս հայրական…
Բայց ծածկում է դեմքը աստված՝
Հայից դարձած ու խրռով,
Սև-սև գիշերն իջնում է ցած,
Լիքը անքուն ցավերով…

IV

Հայի գիշե՛ր, հայի գիշե՛ր,
Ցավի անդունդ անհատակ…
Աղջի՛կ, ինչո՞ւ չես քրնում դեռ,
Ի՞նչ ես լալիս տեղի տակ:

Չիտեմ, մայրի՛կ, ինչու էսպես
Քուն չի գալիս էլ աչքիս.
Աչքրս քանի փակում եմ ես՝

Քուրդն է կանգնած առաջիս…
Քընի՛ր, բալա՛ս, մի վախենար,
Աստված կա դեռ երկրնքում.
Քուրդ ու տաճիկ, զարկ ու ավար
Շատ ենք տեսել մեր կյանքում…
Մայրի՛կ, մայրի՛կ, չե՞ս իմանում,
Ո՞վ է լալիս դուրսն անտեր…

Մայրի՛կ, մի տես՝ չի լուսանո՞ւմ…
Ա՛խ, ինչ ծանր է էս գիշեր…

Քընի՛ր, բալա՛ս, Որբն է մենակ
Իր Սըհակին որոնում,
Է՛, քեզ նըման, մի ժամանակ
Նա էլ աղջիկ է լինում,
Հավանում է չար տաճիկը,
Գալիս եղբորն ըսպանում,
Ճարը հատած հեգ աղջիկը
Աստծուն աղոթք է անում.

Ո՛վ տեր աստված, թեր տուր ինձ,
Թեթև թեր թռչունի,
Թըռչե՛մ, կորչեմ էս աշխարհքից,
Անգութ ձեռից դուշմանի…
Էն օրվանից ման է գալի
Թեր առած, անդադար,
Կանչո՛ւմ, կանչո՛ւմ, ձեն է տալի
Իր Սըհակին ջըրատար…
Քնի՛ր, բալա՛ս, աստված դեռ կա,
Աղոթք ասա մըտքիդ մեջ,

Հիմի շուտով լիսն էլ կըգա,
Էս գիշերն էլ ունի վերջ…

Թրը՛խկ… թրը՛խկ…
Ո՞վ է ծեծում
Կես գիշերին դուռն էդպես…
Թրը՛խկ, թրը՛խկ…
— Հե՛յ, չե՞ս լըսում,
Վեր կաց, տերտե՛ր, ներս թող մեզ…

Ու անլեզու քըրդի նըման
Սարսափն հանկարծ ընկավ տուն,

Տեղի տակին կըծիկ եկան
Մանուկները դեռ անքուն:
Մարեց մայրը լեղապատառ,
Աղջիկն հանգավ մոր գըրկում,

Իսկ դուռն ուժգին ու անդադար
Հա՛ զարկում են ու զարկում:

Լույսը ձեռքին ծերը գունատ
Դողդողում է, երերում…
Ձեռքը փակին տարավ հանկարծ,
Դուռը բացվեց խավարում,

Շառաչեցին, շողշողացին
Ձենքերն լուսումն էն աղոտ,
Ու զինավառ ներս խուժեցին
Երեք ջահել անծանոթ:
Օրինյա՛ ի տեր, հայի լեզվով
Ողջունեցին ու մըտան,
Մութ խըրճիթը լըցվեց լուսով
Անակընկալ խընդության:
Էսպես անժամ, դարիք եղբա՛րք,
Ո՞ւսկից եք դուք գալիս ինձ…

Հեռու տեղից, Կովկասից…
Բայց մեր երկիր ամեն անկյուն
Մահվան երկյուղ ու վրտանգ…
Դրրա համար մենք եկանք…
Իսկ դուք չունե՞ք ձեր աշխարհքում
Տուն, տեղ, ծընող, քույր կամ կին…
Ունենք, թողինք ամենքին…

Հայի գիշե՛ր, անքո՛ւն գիշեր,
Լի տանջանքով ու մութով,
Հայի գիշե՛ր, անհո՛ւն գիշեր,

Լի՛ ահավոր խորհուրդով…